ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Գոռ Պարգևի Գրիգորյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչությունում (այսուհետ՝ Վարչություն) որպես փորձագետ աշխատելու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Իրականացրել եմ ռիսկերի կառավարում, այն է՝ ռիսկային վերահսկվող օբյեկտների ցանկերի ստացման նպատակով իրականացրել եմ ռիսկայնության գնահատման չափանիշների ու մեթոդաբանության մշակում, իրականացրել եմ մշտադիտարկում ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնում:

2. Իրականացրել եմ վերահսկվող օբյեկտների գործունեության և վերջիններս կողմից պետական միջոցների կառավարման օրինականության և արդյունավետության վերահսկողության նպատակով ուսումնասիրություններ և մշտադիտարկումներ:

3. Վարչության լիազորությունների շրջանակներում առանձին հարցերի պարզաբանման նպատակով, այդ թվում՝ առանձին վերահսկվող օբյեկտների մասով իրականացնում եմ վերլուծություն՝ առցանց ստացվող, հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների օգնությամբ հավաքվող տեղեկությունների հիման վրա առկա իրողությունները պարզելու և դրանց համապատասխան գնահատական տալու նպատակով՝ վարչության պետին ներկայացնելով վերլուծության արդյունքներն ամփոփող առաջարկություններ, տեղեկանքներ և զեկույցներ:

4. Անմիջական ղեկավարիս հանձնարարությամբ պատրաստել եմ գրություններ և ուղարկել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիներին, և այլն: Իրականացրել եմ պետական վերահսկողության արդյունքներով արձանագրված խախտումների, խնդիրների, դրանց պատճառների, հանգամանքների ու հետևանքների վերլուծություն դրանց վերաբերյալ վարչության պետին ներկայացնելով առաջարկություններ, տեղեկանքներ և զեկույցներ:

5. Իրականացրել եմ ծառայության լիազորությունների անխափան և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ տվյալների շտեմարանների ստեղծման, տվյալների արդիականացման, ծառայությանը հասանելի այլ շտեմարանների առկա տեղեկությունների արտածում:

6. Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում եմ վարչության աշխատանքների կազմակերպման, վերահսկման կամ համակարգման գործընթացում

տրված հանձնարարությունների հիման վրա սահմանված ժամկետում և որակով վարչության գործառույթներին առնչվող այլ աշխատանքներ, Իրականացրել եմ անմիջական ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականներ:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության
ստուգումների իրականացման ոլորտի
վերահսկողության վարչության փորձագետ՝
Գրիգորյան Գոռ

«04» հոկտեմբերի 2024թ.